ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 543-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մասը, 44-րդ հոդվածի 8-րդ մասը, 46-րդ հոդվածի 1-ին մասը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 62-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերը, 66-րդ հոդվածի 3-րդ մասը, 71-րդ հոդվածի 5-րդ մասը, 74-րդ հոդվածի 5-րդ մասը, 76-րդ հոդվածի 3-րդ մասը, 78-րդ հոդվածի 4-րդ մասը, 79-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, 81-րդ հոդվածի 4-րդ մասը, 86-րդ հոդվածի 7-րդ մասը, 88-րդ հոդվածի 7-րդ մասը, 99-րդ հոդվածի 2-րդ մասը, 107-րդ հոդվածի 5-րդ մասը, ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 10-րդ, 11-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 26-րդ, 29-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշումը:

3. Սույն որոշումից բխող՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամաններն ընդունվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում: Մինչև այդ հրամանների ընդունումը գործելու են կարգավորման նույն առարկան ունեցող հրամաններն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ չեն հակասում (mutatis mutandis) սույն որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ